

Պատասխան Եգիպտոսի սուլթանին առ Յովհաննես Ա,
քաղաւոր Կասիկոյի (1)

Թագաւոր ամենահզօր, արքայ արդարադատ, իշխան քաջատոնմ, արդարակորով, աշխարհակալ, կրօնասէր, պաշտպանող եւ շնորհաձիր յաղթող, բարեւաւիշ աշխարհի եւ տարածող հաւատոյ, թագաւոր Մաւրիտանիայի եւ Մաւրիտանացոց, բոլոր երկիրներու մէջ արդարութիւն փնտռող, նախատուածներու միեթարիշ, թշնամանողներու՝ հերետիկոսներու եւ անհաւատներու ջախջախիշ, երկիրներու՝ թագաւորութիւններու եւ կլիմաներու նուաճող, Արաբաց, Լատինաց եւ Թուրքաց իշխանութեանց ժառանգորդ, ժամանակիս Աղեքսանդրը, քաջ պատերազմիկ, հաւատքի վերաբերեալ խօսքերու հաւաքիշ, երկրիս վրայ հովանի Աստուծոյ, Անոր օրէնքներուն ու պատուիրաններուն պահպան, ուխտաւորներու եւ ուխտադնացութիւններու պաշտպան, երկու սուրբ տուններու(2) ծառայ, թագաւորաց եւ կայսերաց պետ, գովեալ թագաւոր հաւատացելոց, Աբուլանայէ Հաջի (= Հաջի-իբն-Շարան, 1382-83), որդի կրօնապետի, մեծազարմ թագաւորի, պաշտպանի աշխարհի եւ հաւատոյ. Աբուլնասէհէտէ Հուալէ (= Ալի-իբն-Շարան, 1377-82), որդի պարկեշտ՝ աշխարհի ու հաւատքի վհապանձ թագաւորին. Աբուլմահիբի Հուսայնէ (= Շարան-իբն-Հուսէյն, 1363-77), որդի հաւատքի եւ աշխարհի պաշտպան թագաւորին. Մահոմադ (= Մոհամէդ-իբն-Հաջի, 1361-63), որդի Ալմանսուր թագաւորի՝ սուսերին աշխարհի եւ հաւատոյ. Աստուած անոր թագաւորութիւնը պահպանէ եւ պաշտպանէ իր հպատակները, իր խորհրդականներն ու իր ասպետները :

նին դրկուած քղբերուն օրինակները չկան մեջտեղ, քեե՛ս պե՛տ եմ խոստովանիլ՝ սպանիական մասենադարաններն անձամբ խուզարկելու բարեբախտութիւնը չունեցայ դեռ : Եթէ օր մը խուզարկուին այդ մասենադարանները՝ կը լուսամ որ մեր պատմութեան նկատմամբ շատ բան զճնուի անոնց մէջ :

(1) Այս ու յաջորդ պատասխաններուն արաբերէն բնագիրները յայտնուած չեն մինչեւ հիմա, բայց քեռես օր մը զճնուին. իսկ առ այժմ կօզմուին մենք անոնց սպաներէն քարգմանութիւններէն, որոնք մի բանի տեղ հրատարակուած են, մանաւանդ *Cronicas de los reyes de Castilla*-ի մէջ, հս. Բ, եր. 169 : Ասոր սպաներէն բնագիրը տե՛ս գրքիս վերջը՝ Document IX.

(2) Անուո՛ւս Մեֆէի եւ Մեդիբեի կականակէ :